

Հաստատված է՝ _____

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Սուշեղ Ասատրազյան

(ստորագրություն)



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

(վերահաստատված)

Հաստատված է՝ _____

Հայկական բժշկական ինստիտուտի

գիտական խորհրդի 2017 թվականի

օգոստոսի 29-ի նիստում

ռեկտոր Սուշեղ Աստարացյան

(ստորագրություն)



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

ՀԱՅԿԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ

1. Ընդհանուր դրույթներ

1. ՀԲԻ-ի ֆակուլտետը ինստիտուտի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործընթացը կազմակերպող հիմնական ստորաբաժանումն է:
2. Ֆակուլտետը ստեղծվում վերակազմակերպվում և լուծարվում է ռեկտորի հրամանով, գիտական խորհրդի առաջարկությամբ, հիմնադիր խորհրդի որոշմամբ:
3. Ֆակուլտետը կազմված է ամբիոններից:
4. Ֆակուլտետի կառավարման մարմիններն են՝ ֆակուլտետային խորհուրդը և ֆակուլտետի ղեկանը:
5. Ֆակուլտետի կառավարման կոլեգալ մարմինը, ֆակուլտետի խորհուրդն է, որը նախագահում է ֆակուլտետի ղեկանը:
6. Խորհրդի կազմում ընդգրկվում են ֆակուլտետի ամբիոնների վարիչները, առաջատար պրոֆեսորներ և դոցենտներ, ինչպես նաև գիտամանկավարժական կազմի այլ ներկայացուցիչներ՝ յուրաքանչյուր ամբիոններից մեկական անդամ: Ուսանողական համակազմի ներկայացուցիչները պետք է կազմեն խորհրդի անդամների թվի 25%-ը: Լ. Ֆակուլտետի խորհրդի ցուցակային կազմը հաստատվում է ՀԲԻ-ի ռեկտորի կողմից 5 տարի ժամկետով:

2. Ֆակուլտետի խորհուրդը

- 2.1 Ֆակուլտետի խորհուրդը քննարկում է և ինստիտուտի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում ֆակուլտետի կանոնակարգը:
- 2.2 Կազմակերպու է ֆակուլտետի ղեկանի, ամբիոնի վարիչի և պրոֆեսորա-դասախոսական թափուր տեղերի առաջադրում:
- 2.3 Առաջարկություններ է ներկայացնում ինստիտուտի գիտական խորհուրդ, ֆակուլտետի կազմում ամբիոններ և այլ ստորաբաժանումներ ստեղծելու, վերակազմավորելու, լուծարելու վերաբերյալ:
- 2.4 Քննարկում և ընդունում է ֆակուլտետի գործունեության մասին տարեկան հաշվետվությունը, ֆակուլտետի տարեկան աշխատանքային պլանը:
- 2.5 Առաջադրում է ֆակուլտետի ներկայացուցիչների ինստիտուտի գիտական խորհրդի կազմում:
- 2.6 Լուծում է ֆակուլտետի ուսումնամեթոդական և գիտահետազոտական գործունեության առընչվող հարցեր:

2.7 Ֆակուլտետի խորհրդի աշխատանքային պլանը հաստատվում է ռեկտորի կողմից: Խորհրդի որոշումները ընդունվում են բաց քվեարկությամբ, ձայների պարզ մեծամասնությամբ: Թափուր պաշտոնների տեղակալման գիտական կոչումների շնորհման նպատակով, թեկնածուների որոշումները ընդունվում են փակզ ադտնի քվեարկությամբ:

2.8 Խորհուրդի որոշումները ուժի մեջ են մտնում ֆակուլտետի ղեկանի կողմից հաստատվելուց հետո:

3. Ֆակուլտետի խորհրդի խնդիրները:

3.1 Դասավանդող առարկաների բովանդակության համապատասխանեցումը պետական կրթական չափորոշիչներին և գիտական արդի պահանջներին: Ֆակուլտետում իրականացվող մասնագիտության ուսումնական պլանի, առարկայական ծրագրերի քննարկում և երաշխավորում::

3.2 Նոր առարկաների, ամբիոնների, կուրսերի, ցիկլերի, առաջարկում:

3.3 Դասագրքերի, ուսումնական ձեռնարկների հրատարակման, ձեռք բերման կազմակերպում:

3.4 Դասավանդող առարկաների յուրացման նոր, մատչելի եղանակներից առաջարկում և կազմակերպում:

3.5 Լաբորատոր և գործնական աշխատանքների համապատասխանեցումը կարդացվող տեսական դասընթացներին:

3.6 Ընթացիկ, ավարտական քննությունների, հարցաշարերի քննարկում, երաշխավորում, ձևավորում:

3.7 Ուսումնա արտադրական պրակտիկանների ծրագրերի մշակում և նրա արդյունավետության բարձրացման ուղղիների առաջարկում:

ՀԲԻ-Ի ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳ

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույնով սահմանվում է ՀԲԻ-ի ֆակուլտետի ղեկանի պաշտոնի թեկնածուների առաջադրման ընտրությունների անցկացման և հրամանագրման կարգը:
2. Ֆակուլտետը ղեկավարում է ֆակուլտետի ղեկանը, ով մրցութային հիմունքներով ընտրվում և ռեկտորի կողմից նշանակվում է մինչև 5 տարի ժամկետով:
3. Ֆակուլտետի ղեկանը այդ պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի քան 2 ժամկետ անընդմեջ:
4. Ֆակուլտետի ղեկանը ինստիտուտի կառավարման, գիտական, ֆակուլտետային խորհրդի անդամ է:
5. Ֆակուլտետի ղեկանը պարտավոր է գիտենալ սահմանադրությունը, ՀՀ կրթության վերաբերյալ օրենսդրական պահանջները և ՀՀ ԿԳ նախարարության նորմատիվ կանոնակարգային փաստաթղթերը, ինստիտուտի ներքին կարգապահական կանոնները:
6. Ֆակուլտետի ղեկանը պարտավոր է տիրապետել կրթության և գիտության համակարգերի կառավարման մեթոդներին, ինչպես նաև մանկավարժական հոգեբանությանը:

II. Դեկանի պաշտոնի թեկնածուների առաջադրում

7. Դեկանի պաշտոնի թեկնածու առաջադրվում է ՀԲԻ-ի գիտամանկավարժական տարիների փորձ ունեցող պրոֆեսորա-դասախոսական կազմից:
8. Դեկանի թափուր պաշտոնի համար թեկնածուն /թեկնածուները/ կարող է առաջադրվել հիմնադիր կառավարման խորհուրդների կողմից, ֆակուլտետի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կամ ինքնաառաջադրմամբ:

9. Դեկանի ընտրությունները նշանակվում են ՀԲԻ-ի ռեկտորի հրամանով, ընտրություններից 30 օր առաջ ֆակուլտետի ստորաբաժանումներ և հղում համապատասխան ծանուցում:
10. Անհրաժեշտ փաստաթղթերը
*Դիմում ռեկտորին, կադրերի հաշվառման անհատական թերթիկ, աշխատանքային գրքույկի պատճե, թաստաթղթեր գիտական և մանկավարժական կոչումների մասին և այլն, որոնք ներկայացվում է ՀԲԻ-ի գիտական քարտուղարին:

III. Գիտական խորհրդի կողմից դեկանի ընտրության անցկացում

11. Դեկանը ընտրվում է ինստիտուտի գիտական խորհրդի կողմից:
12. Գիտական խորհրդի նիստը իրավագոր է խորհրդի կազմի առնվազն 2/3-ի ներկայության դեպքում:
13. Նախագահողը ներկայացնում է թեկնածուների ցուցակը և ծրագրային ելույթի համար ըստ ցուցակի /այբենական կարգով/ ձայնը տալիս է դեկանի պաշտոնի թեկնածուներին:
14. Յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո գիտ խորհրդի անդամները կարող են հարցեր տալ թեկնածուին:
15. Թեկնածուների ելույթից հետո սկսվում է թեկնածուների քննարկում, որին մասնակցում են միայն խորհրդի անդամները:
16. Թեկնածուների քննարկումը դադարեցվում է նախագահողի առաջարկությամբ:
17. Քննարկումների ավարտից հետո նախագահողի առաջարկությամբ կարող է թեկնածուներին տրվել լրացուցիչ ելույթի կամ պարզաբանումների հնարավորություն:
Նախագահողի առաջարկով, իսկ / գաղտնի/ քվեարկություն անցկացնելու և արդյունքները ամփոփելու համար խորհրդի անդամներից ընտրվում է 33 հոգուց կազմված հաշվիչ հանձնաժողով: Թեկնածուները չեն կարող լինել այդ հանձնաժողովի անդամ: Հանձնաժողովը իր կազմից ընտրում է նախագահի: